

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏՈՒՄ

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ՝

ՌԵԿՏՈՐ _____ Ա.Պ. ԹԱՐԵՐԴՅԱՆ
« _____ » _____ 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Դ Ր Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնը (այսուհետև կենտրոն) Համալսարանի կանոնադրության 29-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն ստեղծվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետև համալսարան) Հոգաբարձուների խորհրդի 2014 թ.-ի հունվարի 24-ի որոշմամբ (արձանագրություն 1/3):
2. Կենտրոնը իրավաբանական անձ չէ, Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է:
3. Կենտրոնի կանոնակարգը համալսարանի կանոնադրության 50-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը, վավերացվում և գործողության մեջ է դրվում համալսարանի ռեկտորի հրամանով:
4. Կենտրոնի լրից անվանումն է՝

Հայերեն՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոպարենային համակարգի ուսումնասիրտադրական կենտրոն,

Ռուսերեն՝ Учебнопроизводственный центр агропромышленной системы армянского национального аграрного университета.

5. Կենտրոնի հասցեն է՝ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ:

2. Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ի Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը

6. Կենտրոնի հիմնական խնդիրն է համալսարանն ավարտող մասնագետների պատրաստման մակարդակի համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջարկին: Կենտրոնի առաքելությունն է տարածաշրջանում դառնալ ագրոպարենային համակարգի օրինակելի ձեռնարկություն, որը ծառայություններ կմատուցի գյուղատնտեսության վարման, տեխնիկայի շահագործման, կենսաէներգիայի և ագրարային ոլորտի այլ բնագավառներում խորհրդատվական և տեղեկատվական ուղղություններով:

7. Այդ խնդիրն իրագործելու նպատակով կենտրոնը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով կազմակերպում է ագրոպարենային կրթագիտական համակարգի սպասարկման համար ուսումնասիրտադրական անհրաժեշտ գործունեություն (գյուղատնտեսական տեխնիկայի ուսուցում, շահագործում, սեմինար դասընթացների և ուսումնասիրտադրական պրակտիկայի կազմակերպում, գյուղատնտեսական մասնագետների վերապատրաստում, անասնաբուժական փորձակայան, պտղաբուժական ծառայություններ, տեղեկատվական ծառայություններ, գյուղատնտեսական տնտեսության վարում, սննդամթերքի տեխնոլոգիա և այլն), որոնց արդյունքների իրացումից ստացված միջոցները (նյութական և ֆինանսական) ուղղվում են կենտրոնի պահպանման ծախսերը հոգալուն՝ Համալսարանի կողմից սահմանված կարգով:

8. Սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված հիմնախնդրի իրականացմանը կնպաստեն ներքոհիշյալ հարցերի իրականացումը.

- Ագրարային ոլորտի կրթական համակարգի (մասնագիտական և բարձրագույն) բարելավում, ինչը ենթադրում է.
 - դասավանդման տեսական նյութերի արդիականացում,
 - գործնական պարապմունքների և արտադրական պրակտիկայի անցկացում՝ նորագույն ագրարային տեխնիկայի օրինակների վրա դրանց շահագործման իրական պայմաններում,
 - նորագույն ագրարային տեխնիկայի շահագործման, խնամքի, սպասարկման, արատորոշման և նորոգման ժամանակակից մեթոդների ու տեխնիկական միջոցների կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված ուսումնական ծրագրերի վերանայում,
 - դասավանդման որակն էլ ավելի բարձրացնելու նպատակով դասախոսների և ուսանողների պարբերական վերաորակավորում:
- պետական հովանավորման շրջանակների ընդլայնում՝ գյուղական երիտասարդության համար կրթական համակարգի մատչելիությանն ուղղված միջոցառումների իրականացման ճանապարհով:
- ֆերմերների վերաորակավորման և լիցենզավորման գործընթացի պարբերական կազմակերպում:

9. Կենտրոնի նպատակներից են.

- Ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ներկրման ճանապարհով համալսարանի, նրա մասնաճյուղերի և քոլեջների նյութատեխնիկական բազայի վերազինում.
- Համալսարանի ու նրա մասնաճյուղերի ու քոլեջների, ինչպես նաև հանրապետության գյուղատնտեսական ոլորտի քոլեջների շրջանավարտների նկատմամբ աշխատաշուկայի պահանջարկի բավարարում,
- Համալսարանի, նրա մասնաճյուղերի ու քոլեջների ուսումնական ծրագրերի, մեթոդական նյութերի, պրակտիկ դասընթացների վերանայում և արդիականացում.

- Ֆերմերների պարբերական վերապատրաստում և սերտիֆիկացում.
- Դասախոսական կազմի վերավորակավորում.
- Գյուղական երիտասարդության համար կրթական համակարգի մատչելիությանն ուղղված միջոցառումների իրականացում, պետական հովանավորում, ֆինասավորման նոր աղբյուրների ներգրավում,
- Կադրերի վերաորակավորման և վերապատրաստման միջոցով գյուղական բնակչության զբաղվածության հետ կապված սոցիալական հարցերի մեղմացում և լուծում.
- Ագրարային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի շրջակա ֆերմերային տնտեսություններին մեքենայացված գյուղատնտեսական աշխատանքների պայմանագրային ծառայությունների մատուցում:

10. Կենտրոնի հիմնական գործունեությունը ընդգրկելու է հետևյալ գործառույթները.

- Գյուղ. Տեխնիկայի ուսուցում, շահագործում,
- Մեմինար դասընթացներ,
- Արտադրական կրթություն, ուսումնագործնական պրակտիկա,
- Գյուղատնտեսական մասնագետների վերապատրաստում,
- Խորհրդատվություն (գյուղատնտեսություն և կենսաէներգետիկա),
- Անասնաբուժական փորձակայան,
- Պտղաբուժական ծառայություններ,
- Տեղեկատվական ծառայություններ,
- Գյուղատնտեսական տնտեսության վարում,
- Մանրամթերքի տեխնոլոգիա,

11. Կենտրոնի հիմնական նպատակային խմբերն են լինելու.

- Համալսարանի և նրա մասնաճյուղերի ուսանողները,

- Համալսարանի պետական գյուղատնտեսական քոլեջների (Համալսարանի պետական քոլեջ և Գյումրիի պետական գյուղատնտեսական քոլեջ) ուսանողները,
- ՀՀ մյուս պետական գյուղատնտեսական քոլեջների ուսանողները,
- Գյուղական դպրոցների աշակերտներ,
- Ֆերմերներ,
- Գյուղատնտեսական խորհրդատվական մարմիններ:

12. Ագրարային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնը հատկապես կմասնագիտանա գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկման, դիագնոստիկայի և նորոգման ոլորտում պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման, վերաորակավորման ու վերապատրաստման ուղղությամբ: Բացի այդ Ագրարային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնում կիրականացվեն նաև առաջատար ֆիրմաների արտադրության գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներ, ֆերմերային տնտեսություններին կմատուցվեն պայմանագրային մեքենայացված գյուղատնտեսական աշխատանքների ծառայություններ:

13. Կենտրոնի ստեղծումն իրականացնել Համալսարանի ուսումնափորձնական տնտեսությունների միավորման բազայի (Կոտայքի մարզ, Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսություն) վրա՝ ստեղծելով մեքենայացման ուսումնաարտադրական բազա և այն հազեցնելով ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներով և սարքավորումներով:

3. Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ի Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Մ Ը

14. Կենտրոնի կառավարումն իրականացնում է տնօրենը, որին սահմանված կարգով այդ պաշտոնին է նշանակում և պաշտոնից ազատում Համալսարանի ղեկավարը:

15. Կենտրոնի տնօրենը գործում է համալսարանի կողմից տրված լիազորագրի հիման վրա:

16. Միավորման տնօրենը.

- իրեն տրված իրավասության սահմաններում կազմակերպում է կենտրոնի գործունեությունը և պատասխանատվություն կրում այդ գործունեության համար,
- սահմանված կարգով համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում կենտրոնի տարեկան ծրագրերն ու ֆինանսատնտեսական հաշվետվությունները,
Ֆինանսատնտեսական հաշվետվությունները ներկայացվում և համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը համալսարանի հաշվապահության միջոցով,
- պատասխանատվություն է կրում կենտրոնին հատկացված գույքի պահպանության, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև իր մեղքով այդ գույքին պատճառված վնասի համար,
- իր իրավասության սահմաններում գործում է միավորման անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս հանձնարարություններ, արձակում կարգադրություններ, որոնց կատարումը պարտադիր է միավորման աշխատակիցների համար,
- կարող է Համալսարանի ղեկավարությանը առաջարկություններ ներկայացնել կենտրոնի վարչական և տնտեսական անձնակազմի աշխատանքի նշանակելու, աշխատանքից ազատելու, խրախուսել կամ տույժի ենթարկելու վերաբերյալ, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ գործունեություն, ելնելով կենտրոնի գործունեության բնույթից ու առանձնահատկություններից:

4. Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ի Գ Ո Ւ Յ Ք Ը Ե Վ Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

17. Կենտրոնի գույքն են կազմում Համալսարանի կողմից օգտագործման նպատակով տրված հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև Կենտրոնի

գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքը: Կենտրոնի գույքը՝ Համալսարանի գույքն է:

18. Կենտրոնի ֆինանսական ռեսուրսների գոյացման աղբյուրներն են.

- Համալսարանի կողմից օգտագործման նպատակով հատկացված գույքը,
- ՀՀ պետական բյուջեից Կենտրոնին հատկացված միջոցները,
- Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և Համալսարանի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվող «ԱԳՐՈՊԱՐԵՆԱ-ՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ծրագիրը,
- Միջոցներ, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, խորհրդատվական, հրատարակչական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից,
- Հայաստանի Հանրապետության և օտարերկյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած նվիրատվությունները, բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները և կտակված գույքը,
- Համալսարանի անունից (համաձայնությամբ, լիազորությամբ) աշխատանքների կուտակումից, ծառայությունների մատուցումից և սույն կանոնադրությամբ նախատեսվող Համալսարանի կողմից երաշխավորված այլ տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները:

19. Կենտրոնը գործում է ինքնաֆինանսավորման կարգով և նրա գործունեության շրջանակներում բոլոր ֆինանսական գործառնությունները և ծախսերը (աշխատավարձի վճարում, գույքի ձեռքբերում, տնտեսական գործառնական այլ ծախսեր և վճարումներ) կատարվում են բացառապես Կենտրոնի ֆինանսական մուտքերի (ռեսուրսների) և ՀՀ պետբյուջեից կենտրոնին հատկացված միջոցների հաշվին: Այդ նպատակով բանկային հիմնարկությունում բացվում է ընթացիկ հաշիվ, որտեղից ստացված գումարները կարող են ծախսվել ըստ Համալսարանի

խորհրդի կողմից հաստատված նախահաշվի կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման համար:

20. Կենտրոնը համալսարանի կողմից սահմանված կարգով պլանավորում և կազմակերպում է իր տնտեսական գործունեությունը, Համալսարանի անունից մատուցում է ծառայություններ, կատարում աշխատանքներ, պատասխանատվություն է կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կարգով կատարելու, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքները խախտելու համար:
21. Կենտրոնը կատարում է սոցիալական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ, ապահովում աշխատողների աշխատանքի և հանգստի նորմալ պայմաններ:
22. Կենտրոնին տրված գույքը կարող տնօրինվել միայն Համալսարանի համաձայնությամբ: Կենտրոնը պատասխանատվություն է կրում իրեն տրամադրված գույքի պահպանության, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այդ գույքին պատճառված վնասի համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
23. Աշխատողների վարձատրության չափը, հաստիքները և վճարման կարգը Կենտրոնի տնօրենի ներկայացմամբ հաստատում է Համալսարանի ռեկտորը:
24. Աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:
25. Կենտրոնի վերակազմումը կամ լուծարումը կատարվում է ՀԱԱՀ կանոնադրությամբ սահմանված կարգով: